ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 4/Ա- 2

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ- 9, Շիրակ-10, Շիրակ-11 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման քաղաքաշինական նախագծման առաջադրանքների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ և 14-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի համայնքները (Արթիկ քաղաք, Լեռնակերտ, Պեմզաշեն, Տուֆաշեն, Հայկասար, Հայրենյաց բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքին:
2. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի համայնքները (Նահապետավան, Հառիճ, Սարալանջ, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ, Արևշատ, Սպանդարյան, Գեղանիստ, Գետափ բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նաղագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքին:
3. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի համայնքները (Անուշավան, Փանիկ, Մեղրաշեն, Նոր Կյանք, Հոռոմ, Վարդաքար, Հովտաշեն, Սարատակ, Լուսակերտ բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-11 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքին:
4. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «24» «հունվարի» 2022 թ.